



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK 16, N.Y.

MURRAY HILL 6-0710

ՄԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 6053
Ապրիլ 2, 1963

Հոգեշնորհ
Տ. Գարեգին Մ. Վրդ. Գազանճեան
Հոգեւոր Հովիւ Աւաշինկթընի Հայոց
եւ Նախագահ Պատուարժան Մխական Խորհուրդի
Աւաշինկթըն.

Սիրելի Հայր Գարեգին,

Ստացած ենք 1963 Մարտ 29 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 10ին գումարուած
Տարեկան Մխական Ժողովը կատարած է Մխական Խորհուրդի մասնակի
ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խընդ-
րէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Մխական Ժողովը տեղի ունեցած է
Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն եւ ընտրու-
թիւնը կատարուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալ-
ները՝ իբրեւ անդամ Մխական Խորհուրդին.

Տիարք՝ Վահան Քիւրքճեան
Յիլիփ Օկուլեան
Ռէյմընտ Պապիկեան
Տօթթ. Ալպըրթ Մանեան

Կը յանձնարարենք որ Ձեր տարեկան հաշուեկշիռը եւ Մխա-
կան Խորհուրդի նոր դիւանի կազմի անուն-հասցէները Առաջնորդարան
դրկէք փութով:

Օրհնելով Մխական Խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք ձեզի
յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան շրջան մը, ի պայծառութիւն
Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ
ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Ազօթարար

ՄԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի